# ՄԱՆՐԱԼՈՒՐՔ

Ծովի յատակում խնջոյք. Վերջին ժամանակներս Նիւիորքում բոլորովին արտասովոր մի խնջոյք տեղի ունեցաւ, որի կոչնատէրն էր ջրի տակ սուզուող Արգո նաւի հնարող՝ նաւապետ Լեկը. Հրաւիրեալները, թուով 13 հոգի, Բրիճպորտի մօտ, մտնում են Արգո նաւը, և որը սկսում է սուզուել ջրի տակ. Ջրի տակով նաւն անցնում է մի քանի անգլիական մղոն և, երբ նաւը լինում է 35 ոտնաչափ խորութեան մէջ, սկսում է ճաշը, որի համար առաջուց ափում, ցամաքի վրայ պատրաստութիւն էին տեսել. Ճաշից յետոյ, նաւի մէջ եղած յատուկ գոնից, նաւապետը ջրի յատակը երկու նաւաստի է իջեցնում, որ հագել էին ջրին յարմար կատարելագործուած զգեստներ. Նաւապետը հրաւիրուածներին ցոյց տուեց առանձին մեքենայ, որի միջոցով սուզուած իրերը ջրի երես ելնել կարող էին. Արգոնաւտը գտաւ ծովի յատակում քարածուխ բարձած մի նաւակ և վեր հանող մեքենայով սկսեց բարձրացնել, որ մի բոպէում մղում էր 1 տոն մօտ 62 փութ. Նաւը կառավարում էր ինքը նաւապետը, որ ձեռքի տակ ունէր 5 նաւաստի. Ցամաք ելնելուց յետոյ միայն հրաւիրեալներից ոմանք կանգնում էին թեթև գլխացաւից.

Արգոնաւտը երկրորդ նաւն է, որ հնարում է նաւապետ Լեկը, և այս նաւը անհամեմատ աւելի կատարելագործուած է քան առաջինը. Ամբողջ նաւը շինուած է պողպատից և բանանի ձև ունի. Նաւը կարող է շարժուել ջրի տակ և ծովի յատակի վրայով ժողովելու համար ծովի տակ սուզուած իրեր ու նաւի բեկորներ. Նաւը շրջապատուած է ցանցաձև հիւսած ամուր փայտով, որ թուլացնում է ծովի խոր մասերում եղած ջրի զօրեղ ճնշումը. այդ փայտեայ հիւսուածքի մէջ տեղաւորուած է մեծ արկղ, որ նաւորդների համար օդի պաշարով է լցուում.

Նաւը շարժւում է գազոմոտորով, որ 30 ձիու ոյժ է արտադրում. Ծովի յատակում նաւը շարժւում է 4 անուի վրայ. Արգոնաւտի ճակատին կան երկու հատ հսկայական ելէքտրական լապտերներ, որ լուսաւորում են ծովի յատակը. Նաւը երկու հատ դուռն ունի. Նրանցից նաւաստիները հեշտութեամբ դուրս են գալիս և ներս են մտնում, երբ նաւը ջրի տակին է. Նաւի տակ առանձին տեղ կայ, որ դատարկ է լինում. երբ ուզում են նաւը սուզել ջրի տակ, այդ դատարկութիւնը լցնում են ջրով. իսկ երբ ուզում են նաւը ջրի երես հանել, այդ տեղից մեքենաներով դատարկում են ջուրը.

* *
*

Թէ ինչու են վնասում խոնաւ բնակարանները. Խոնաւ բնակարանը օրքան էլ տաքացնենք, մարդ նրա մէջ ցրտութիւն կը զգայ. Ցրտութիւնն այնքան աւելի զգալի կը լինի, օրքան աւելի մօտենանք խոնաւ պատին և հենց այդպիսի պատերն են, որ մեր մարմնից աւելի տաքութիւն են խլում. Այդ վնասն աւելի զգալի է լինում գիշեր ժամանակ, երբ մարդ քնած է լինում. ինչպէս յայտնի է քնած ժամանակ, երբ մարդու մարմինն աւելի հանգիստ վիճակի մէջ է լինում, աւելի շուտ էլ տաքութիւն է արտադրում, ուստի և խոնաւ պատի ազդեցութեամբ աւելի շուտ է կորցնում իւր առանց այն էլ արտադրած քիչ տաքութիւնը. իսկ մարդս, որովհետև քնած ժամանակ աւելի ուշ է զգում թէ սառչում է, չի ծածկուում և մրսելուց ստանում է զանազան ջղային հիւանդութիւններ՝ ոսկրացաւ, յօդացաւ, շնչառութեան գործարանի հիւանդութիւն և այլն.

Եթէ խոնաւ սենեակների օդը հեշտութիւամբ չի փոխուում, և աւելի շատ մարդ է բնակուում նրա մէջ, այն ժամանակ վնասն աւելի զգալի է լինում.

Բացի այս, խոնաւ պատերը երբեմն բորբոսնում են, կամ ծածկուում զանազան մանրադիտական սունկերով, որ զանազան վնասակար բացիլների զարգանալու և գործունէութեան համար ամենալաւ ասպարէզն են ներկայացնում.

Պարզէ, որ խոնաւ բնակարաններում ապրելն անպայման վնասակար է առողջութեան համար.

* *
*

Կաթն ինչպէս պէտք է պահել փլանալուց. Ամառ ժամանակ մարդ բաւական դժուարութիւն է կրում թարմ կաթը պահելու համար, մանաւանդ երբ սառնարան չի ունենում. Շոգ օրերը մի քանի ժամուայ ընթացքում կաթն իսկոյն թթւում է և գործածութեան համար անպէտքանում.

Դորա առաջն առնելու համար, պէտք է կաթը լցնել ապակեայ անօթի մէջ, բերանը փակել կափարիչով, ապա անօթը դնել սառը ջրի մէջ, իսկ վրան ձգել թրջած քաթանի կտոր, որի ծայրերը պէտք է թողնել ջրի մէջ. Այսպիսի հանգամանքի մէջ կաթը պահպանուում է թթուելուց. որովհետև ջուրը անընդհատ գոլորշիանալով քաթանից՝ իրեն հետ հեռացնում է և ջերմութիւնը և սառցնում է անօթն ու կաթը.